ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՔԱՂԱՔ ՍԵՎԱՆ
ԻՏԱԼԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՔԱՂԱՔ ԱՎԻԼԻԱՆԱ

1. Հայաստանի Հանրապետության Սևան քաղաքը և Իտալիայի Հանրապետության Ավիլիանա քաղաքը կնքում են Համագործակցության մասին Համաձայնագիր:

Համաձայնագրի նպատակն է՝

- Ամրապնդել երկխոսությունը հայ և իտալացի ազգերի միջև, ինչը կնպաստի բնակչության զարգացմանն ու բարօրությանը, աշխարհի մաս կազմելու զգացողության ուժեղացմանը.
- խթանել երկու քաղաքների ընդհանուր շահերի և բարեկամական հարաբերությունների ամրապնդմանը, համագործակցության և ժողովրդավարության զարգացմանը:

2. Քաղաքները համակարծիք են, որ համագործակցության հիմնական բաղադրիչ է ազատ ժողովրդավարության ճանապարհով ընտրված քաղաքային իշխանությունների միջև երկխոսության զարգացումը: Այդպիսի երկխոսության նպատակն է խրախուսել շփումները ժողովուրդների միջև և խթանել հասարակական, մշակութային կյանքի բոլոր ոլորտներին վերաբերող համագործակցությունը և փոխանակման նախաձեռնությունները:

3. Համագործակցության հիմնական ոլորտներն են՝

- Փորձի փոխանակում տեղական ինքնակառավարման մարմինների միջև.
- Փոխանակման ծրագրերի իրականացում ուսումնական հաստատությունների միջև.
- Մշակութային, սոցիալական ուղղվածության և կամավորական ասոցիացիաների միջև փոխանակման ծրագրերի իրականացում.
- Համագործակցություն սպորտի բնագավառում.
- Անհատական և կազմակերպված զբոսաշրջություն երկու քաղաքների բնակչության համար.
- Տնտեսական ոլորտում փորձի փոխանակում՝ ներդրումային ծրագրերի իրականացմամբ.
- Երիտասարդների փոխանակման ծրագրեր

4. Համագործակցության ընթացքում ծագած խնդիրները և խնդրահարույց հարցերը կքննարկվեն երկու քաղաքների ներկայացուցիչների փոխադարձ համաձայնությամբ:

Ավիլիանա, 18-06-2016թ.

Սևան քաղաքի անունից՝
Ռուդիկ Ղուկասյան
Սևանի քաղաքապետ

Ավիլիանա քաղաքի անունից՝
Անջելո Պատրիցիո
Ավիլիանայի քաղաքապետ